

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական

խորհրդի 24/06/2020թ. թիվ 143

նիստում

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ



ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՓՈԽԿԱՊԱԿՑՄԱՆ
ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ 2020

Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմները

Ժամանակակից կրթական հաստատություններում դասախոսների մասնագիտական պատրաստվածության կատարելագործման կարևորագույն գործոնը դա կրթությունն է գիտության միջոցով, այսինքն ուսումնառության և գիտահետազոտական գործունեության միասնությունը՝ երբ ուսումնական գործընթացը հիմնվում է դասախոսների ու ուսանողների համատեղ գիտական հետազոտությունների վրա: Սակայն, հայտնի է, որ բավական դժվարին ու տևական խնդիր է հանդիսանում գիտական ու կրթական միջավայրերի համատեղումը մեկ միասնական հաստատության շրջանակներում, քանի որ, ըստ ձևավորված կարծրատիպի, դրանցից առաջինը ենթադրում է նոր գիտելիքների ձեռքբերմանն ուղղված գործողությունների ու միջոցառումների համալիր, իսկ երկրորդը՝ պատրաստի գիտելիքների մատուցման գործընթաց: Հիմնախնդրի լուծման լավագույն եղանակը կրթական հաստատության կառույցի ներսում արդյունավետ գիտական ստորաբաժանումների ստեղծման մեջ է, որոնք ունակ կլինեն ձևավորելու շոշափելի գիտական արդյունքներ ապահովող բարձր մակարդակի գիտական միջավայր, ինչը և ներառված է Կենտրոնի հետազոտությունների հեռանկարային ռամավարական ծրագրում: Նշված ռազմավարական նպատակի ձեռքբերման ընթացքում նախագծված կարճաժամկետ ու միջնաժամկետ ծրագրերի շարքում նախատեսվում և իրականացվում է հետևյալը.

- Կենտրոնում գիտական միջավայրի ձևավորմանը միտված գործառույթներ, մասնավորապես գործընկերային հարաբերությունների ստեղծում խոշոր գիտահետազոտական կենտրոնների հետ, դրանց հետ համատեղ հետազոտությունների իրականացում, որոնց աշխատանքներում անպայմանորեն ներգրավվում են ուսանողները,
- յուրաքանչյուր ամբիոն՝ հատկապես պետք է ներգրավված լինի սեփական նախաձեռնության գիտական ծրագրի կամ այլ գիտահետազոտական կենտրոնի գիտական հետազոտությունների շրջանակներում,
- ուսանողների ներգրավմամբ գիտական կոնֆերանսների, սեմինարների կազմակերպում, համատեղ գիտական հոդվածների հրապարակում,
- հանրապետական ու միջազգային գիտական մրցույթներին մասնակցության խրախուսում և այլն:

**Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցումից
դասախոսների և ուսանողների բավարարվածության վերլուծությունը**

Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցումից դասախոսների և ուսանողների բավարարվածության գնահատման ու վերլուծության համար մշակվել է հարցաթերթիկ:

Հետազոտական գործունեության եվ ուսումնական գործընթացի փոխկապակցումից դասախոսների եվ ուսանողների բավարարվածության գնահատման ու վերլուծությունը

Հնարավոր պատասխաններն ու գնահատման միավորները

Բավարարվածության չափանիշները	լրիվ համաձայն եմ 5	համաձայն եմ 4	չեզոք եմ 3	համաձայն չեմ 2	Ամենեվին համաձայն չեմ 1
Դասաժամին քննարկվում է թեմայի արդիական հիմնախնդիրները					
Յուրաքանչյուր ուսումնական թեմայի շուրջ արվում է արտաժամյա ռեֆերատիվ զեկույցի ներկայացում ու քննարկում					
Գիտական հետազոտությունների կատարման մեթոդաբանությունը մատուցվում է լիարժեք կերպով					
Հետազոտության շրջանակում ուսանողին տրվում են տեսական բնույթի հանձնարարա- կաններ					
Հետազոտության շրջանակում ուսանողին տրվում են գործնական բնույթի հանձնարարականներ					
Հետազոտության գործընթացն ապահովված է անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով					
Հետազոտական գործունեության արդյունքներ- ըի ամփոփման միջոցառումների (գիտաժողով, սեմինար, հոդվածներ) պարբերականությունը, կազմակերպչական ու գիտական որակները բավարար են					
Հետազոտական գործունեության ձեռքբերում- ները խրախուսվում են կենտրոնի ղեկա- վարության կողմից					
Բավարարում է կառավարումն ու վերահսկո- դությունը հետազոտական աշխատանքի նկատմամբ					

Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցումից դասախոսների և ուսանողների բավարարվածության վերլուծությունը կատարվում է հարցման արդյունքում ստացված տվյալների վիճակագրական վերլուծության միջոցով՝ կիրառելով Ստյուդենտի եղանակը, կորելացիան ըստ Պիրսոնի, դիսպերսիոն վերլուծությունը (ANOVA), ռեգրեսիոն և այլն:

Իրականացված վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտել խնդրո առարկա հանդիսացող երևույթի վիճակը, այն է ուսումնական և հետազոտական գործունեության փոխկապակցվածության մակարդակը, մշակել դրա կատարելագործման ու փոխինտեգրման օպտիմալ մոտեցումները:

Հավելված 1.

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԹԻՐԱԽԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Հարցաշար

1. Նշեք այն հիմնական ուղղությունները, որոնց ուղղված է Ձեր կազմակերպության գործունեությունը:
2. Նշեք այն հիմնական թեմատիկ ուղղությունները, որոնք ըստ Ձեզ ամենարդիականն են Ձեր կազմակերպության գործունեության տեսակետից:
3. Ո՞ր հիմնական ոլորտներին ուղղված հետազոտական տվյալների պակաս ունի Ձեր կազմակերպությունը:
4. Նշեք Ձեզ հետաքրքրող հիմնական թեմաները, որոնց վերաբերյալ կցանկանայիք ունենալ հետազոտական տվյալներ և վերլուծություններ:
5. Նշեք այն հետազոտական թեմաները, որոնք առավել արդյունավետ կդարձնեն Ձեր կազմակերպության աշխատանքը:
6. Ինչպիսի՞ մեթոդներով կատարված հետազոտությունները կարող են Ձեզ ամենից շատ հետաքրքրել:
7. Արդյո՞ք Ձեր կազմակերպության աշխատակիցները (կամ աշխատակիցների որոշ մասը) վերապատրաստումների կարիք ունեն: